



ԱՅՆԹԱՐՅԱՆ ՓԱՅԼԱԿ

ՆՆՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՏԻՊ ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԸ

(«ՆՆՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔ» խորագրով ավարտական շարադրություն 7-րդ գլուխը):

Շնորհալու աշխատությունների շարքում ինքնուրույն տեղ են զբաղում նրա հանելուկները: Նրանց մեջ ավելի բացահայտ են հանդես գալիս հեղինակի հետաքրքրությունը դեպի բնությունն ու նրա տարբեր երևույթները, նրա համակրանքն ու սերը դեպի աշխատանքն ու ստեղծագործությունը և նրա աշխարհայացքը՝ կյանքի, աշխարհի և մարդու նկատմամբ: Յուրաքանչյուր հանելուկ մի սեղմ միտք է, մի գեղեցիկ պատկեր և փորձված ճշմարտություն:

Շնորհալու հանելուկների ընդհանուր վերնագրից երևում է, որ նրանք գրվել են «վառն ուրախությամբ մարդկանց»: Սակայն նրա միակ ցանկությունն այն չի եղել, որ նրանք պարզապես վախտի խաղալիք լինեն, այլ ունենան ուսուցողական նշանակություն:

Հանելուկների որոշ մասը կրոնական բովանդակություն ունեն, իսկ մի զգալի մասը աշխարհիկ են և կապված իրական կյանքի հետ:

Շնորհալու հանելուկների մեծ մասը հրատարակված է, սակայն Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում մի շարք ձեռագրերի մեջ կան դեռ չհրատարակվածներ, որոնց վրա և մենք ցանկանում ենք կանգ առնել:

Շնորհալու հանելուկների նոր շարքը ևս հետաքրքիր երևույթ է մեր մատենագրության պատմության մեջ՝ թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Նրանք առանձնապես արժեքավոր են այն պատճառով, որ ժողովրդ-



դական ստեղծագործության հետ ուղղակի առնչություն ունեցող նմուշներ են:

Կարելի է ասել, որ անտիպ հանելուկներն ևս ունեն այն արժեքն ու նշանակությունը, ինչ որ ունեն տպվածները. նրանք նույնպես բազմազան են և ընդգրկում են հասարակական լայն խնդիրներ:

Նրանցից առավել ուշագրության արժանի են խոհական նշանակություն ունեցողները, որոնք, համեմատաբար, քիչ են: Այս կարգի հանելուկների բովանդակությունը հետաքրքիր է և հարուստ, բայց դժբախտաբար, ժողովրդա-

կան դրոշմը հազիվ է նկատելի:

Անտիպ հանելուկների մեջ ևս երևան է գալիս հեղինակի հետաքրքրությունն ու սերը բնության և կյանքի նկատմամբ:

Նրանք նույնպես գալիս են ապացուցելու, որ Շնորհալին լիովին ծանոթ է կյանքին և թափանցել է նրա մանրուքների մեջ անգամ:

Հեղինակի միտքը այս հանելուկների մեջ ևս ունի հետաքրքիր մարզանքներ՝ համեմված դուրեկան սրամտություններով: Նրանց մեջ կան զանազան կենդանիների, թռչունների և իրերի մասին հանելուկներ, որոնցից ոմանք կարևոր են իրենց բովանդակությամբ, ոմանք՝ իրենց աշխարհիկ ոգով, ոմանք՝ իրենց ձևով ու ժողովրդականությամբ:

Չափազանց ուշագրավ է Շնորհալու դատողությունն այն մարդկանց բախտի նկատմամբ, որոնք գործ ունեն դրամի հետ և պաշ-

տում են այն: Նրա համոզմամբ, դրամա-
պաշտները, վերջ ի վերջո, դատապարտված
են անհաջողության և կործանման:

«Զոսկիդ ես ի յափդ առեր,
Ու իսնէն ի գաղտ կու պահես,
Հետ այդոր ով շատ դատեր,
Նա յետոյ ի վայր մնացեր»¹:

Ուշադրության արժանի է Շնորհալու լուսնի
մասին գրած հանելուկը, որտեղ հեղինակը
նմանություն է ստեղծում լուսնի փուլերի և
մարդկանց կյանքի միջև: Հեղինակը լիովին
ըմբռնում է, որ լուսնի և մարդկանց մաշվե-
լու և նորելու գաղափարի մեջ նրանց հա-
րատությունը կենսական ուժն է արմատա-
վորված:

«Է նշանակ նա աշխարհի,
Անցաւորաց մարդկանց ազգի,
Որ մանկանայ 'ւ ալեւորի,
Դարձեալ խոռի և պակասի»²:

Ուշադրության արժանի է նրա հանելուկը
ժամանակակից «անիրավ դատավոր»ի անար-
դար արարքի վերաբերյալ: Դատավորը թեև
ճանաչում է ճշմարտությունը, բայց արդա-
րացի լուծում չի տալիս խնդրին, որի համար
և նախախնամությունը պատժում է նրան:
Նա բնկնում է Օվկիանոսը, խեղդվում է և
տանջվում կրակի ու խավարի մեջ:

«Կայր դատաւոր մի անիրաւ,
Ճանչէր զղորդն շառնէր իրաւ,
ՅՕվկիանոս ծով խեղդեցաւ,
Տանջի հրով և խաւարաւ»³:

Շնորհալին ցորենի մասին գրել է մի
բանի հանելուկ: Նրանցից առանձնապես ար-
ժեքավոր է մեկը, որը կոչվել հյուսված մի.
գողտրիկ բանաստեղծություն է, ուր պատկե-
րավոր արտահայտված է բանաստեղծի սերը
դեպի բնությունը և ստեղծագործ աշխատան-
քը: Նա հողագործի հողի մեջ ձգած սերմը
համարում է իր «հողվույն հոգին», որը թաղ-
վում է հողի մեջ, ապա հարուստն առնում,
մի շարք տանջանքների ենթարկվում՝ սրի ա-
ռաջ կանգնում, քարկոծվում (քաղվելը և ծծե-
վելը), մտնում է դետինը (ջրաղացը), անց-
նում կրակով (թոնիրը), և այդ բոլորը՝ հա-
նուն «իր սիրույն»:

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 3421, Բ. 344ա:

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 7703, Բ. 101ա:

3. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 2961, Բ. 237ա:

«Տեսայ զիմ հողույս հոգին,
Որ մեռաւ 'ւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրոյս համար,
Ինքն յարեաւ ու շատ դատեցաւ,
Կամաւ նա ի սուր եկաւ,
Եւ քարամբ խիստ քարկոծեցաւ,
Ի գեհեան 'ւ ի հոր մտաւ,
Իմ հողույս հոգին նա դարձաւ»⁴:

Ինչպես տեսնում ենք, Շնորհալու հանե-
լուկները հաճախ ավելի խորունկ իմաստ են
բովանդակում, քան կարծվում է:

Շնորհալին խիստ հակակրանքով է խոսում
կարկտի մասին, որի արդյունքը «պիղծ» է,
որովհետև նա գալիս է շինականի վաստա-
կը փչացնելու:

«Ջուրն հրոյն տուն կազմեցաւ,
Եւ բոցն ի ծոցն ծրարեցաւ.
Նման ցողոյ յերկիր իջաւ,
Արդինքն պիղծ, որ դործեցաւ»⁵:

Նույնօրինակ տրամադրությամբ է գրված
մորեխների մասին հանելուկը, ուր նույնպես
հանդես է գալիս շինականի մի այլ թշնամին.
որը երամներով գալիս է ցանքադաշտերը
ոչնչացնելու և վայ այնտեղին, ուր կիջնեն
այդ «անվարձ» հնձվոր մշակները:

«Թագւոր չունին, ժողւին արագ,
Իջնուն ահեղ անթիւ բանակ.
Եղով ում գան անվարձ մշակ,
Հնձէ դամէն արտերն յստակ»⁶:

Ամբողջովին ժողովրդական բնույթ ունի
աբլորին նվիրված հանելուկը: Նրա բովան-
դակությունը իրական է և տրված է սրամիտ
կերպով: Դիպուկ կերպով քնդգծված է աբ-
լորի բնավորությունը: Հաջող են առաջին եր-
կու տողերի մեջ տրված նմանությունները՝
«բացեղեն մորուք» և «կարմիր սղոց»: Այս
հանելուկը ժողովրդական է և՛ ձևով և՛ բո-
վանդակությամբ: Պարզությունը, սրամտու-
թյունը և հումորը հանելուկի վրա դրել են
իրենց գրողներ:

«Մօրուք ունի ինքն զէտ դրոց,
'Ի ի գլուխն ունի կարմիր սղոց,
Կանայք ունի տասնուհինգոց,
Ձայն կ'արձակէ այլոց կնկոտոց»⁷:

4. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 7703, Բ. 100բ:

5. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր, № 7703, Բ. 101ա:

6. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 2961, Բ. 242ա:

7. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան,
ձեռագիր № 4283, Բ. 21բ:

Վերցնենք Շնորհալու մի ուրիշ հանելուկը, որը գերազանցում է սրան իր արտահայտությունով:

«Բարով եկիր պապ ալևոր,
Բռնեմ շնչացդ և տամ ոլոր...
Խեղդէ, ախմախ, միտքդ է մոլոր,
Յետքդ կ'երթայ ինչ ջաղցի սոր,
Գլուխդ եղբր գէտ ղոշի պլոր»⁸:

Այստեղ ժողովրդական արամտությունն ու կատարել բացահայտ են: Տեղ գտած արտահայտությունները շափազանց համարձակ են: Աշխարհիկ ոգին, առանց փոքր իսկ սքողվելու, արտահայտված է այստեղ: Եթե ապապուցվի, որ այսօրինակ հանելուկները գուտ ժողովրդական են և գրի են առնված հեղինակի փոքրիկ միջամտությամբ և մոծված են հանելուկների շարքում, դարձյալ հեղինակը ո՛չ միայն չի նվաստանա, այլ առավել ևս կբարձրանա, քանի որ նրա հանելուկները, ընդհանրապես, այնքան մոտ են ժողովրդականին, իրենց բովանդակությամբ և ոգով, որ նույնիսկ հաճախ միախառնվում են ժողովրդականի հետ:

Բանաստեղծական մի գողտրիկ հորինվածք է հետևյալ հանելուկը, որտեղ մեծ վարպետությամբ Շնորհալին նկարագրել է «վարդ ու գինի» երեսով մի գեղեցիկ աղջիկ.

«Գոհար նազու մեծ հօր որդի,
Կոյս մի երեսն վարդ ու գինի,
Աչեր ունէր այծման ուլի,
Ջէտ գլուխն էր նազելի»⁹:

Պետք է ասել, որ լուսնի և «վարդ ու գինի» երեսներով աղջկա միջև եղած նմանությունը, որ հաճախ է պատահում ումանտիկական պոեզիայի մեջ, Շնորհալու նման մի հոգևորականի կողմից բերելը նրա ազատամտության պարզ ցուցանիշն է:

Նույնօրինակ վարպետությամբ և լեզվի կոկիկ ներդաշնակությամբ է հորինված՝ «Մի-րանի ծովիկ»-ը, որի ափին նստել է ձկնորսը և գիտում է նրա մեջ խաղացող ձկներին.

«Յիստակ փոքրիկ ծիրան ծովիկ,
Որսորդն ի մոտն նստել կծիկ,
Ձկներն ի ներս գինչ զմարդիկ,
Նրբ տեսանէ զինքն կզիկ»¹⁰:

Այս հանելուկը նվիրված է հայելուն, բայց այս մի գեղեցիկ տեսարանի նկարագրու-

թյունն է և դժվար թե հայելուն հիշեցնի: Բայց որպեսզի իր հորինածները անպայման հանելուկի տպավորություն թողնեն, Շնորհալին իր ասելիքը միշտ էլ տալիս է անուղղակի ճանապարհով: Այդ պատճառով էլ նրա համար առիթ է լինում մի երկրորդ պատկեր, միտք կամ հույզ ստեղծել: Այս քառյակի մեջ ևս նույն բանն է նկատվում: Շատ հաճախ պատահում է, որ այդ հանգամանքը լավ է անդրադառնում, որովհետև հիմնական վարժված կետը ավելի գեղեցիկ և արժեքավոր է հանդես գալիս, քան երկրորդականը: Այս փաստը նկատելի է նաև նշված քառյակի մեջ, ուր «Միրանի ծովիկ»-ի և իր ափին հանդարտ նստած ձկնորսի նկարը, իրոք, շատ ավելի գեղեցիկ է, քան ամենագեղեցիկ հայելին:

Այս տեսանկյունով արժեքավոր է այգուն նվիրված հանելուկը, որը նկարագրական մի նշանակալից հաջողվածք է: Այստեղ ևս ստեղծված է մի երկրորդական բովանդակություն, որն ինքն իր մեջ գեղեցիկ է: Նա պատվում է միայն «հույժ փառավոր» մի կնոջ շուրջը, որը սիրելի է ամենի կողմից և որը թագավորի նման կանաչագույն հագուստ է հագնում.

«Կին մի նստեալ յոյժ փառաւոր,
Դատերք ունի շատ ահաւոր,
Կանաչ հագնէր զերթ թագաւոր.
Ամենեցուն է ցանկաւոր»¹¹:

Լավ է տրված բուխարիկի՝ ծխնելուղի նկարագրությունը հետևյալ հանելուկի մեջ.

«Տուն մի տեսի զերթ մինարայ,
Բազում աչք կայ ի գլուխ նորայ,
Հուրն յարածամ վառի ի նա,
Մուխն յաշուերուն ելեալ գնայ»¹²:

Միանգամայն հետաքրքիր է ջուրյակին՝ բորենուն նվիրված հանելուկը՝ տվյալ գագառի գիշատիչ բնավորությունը հարազատ կերպով դրսևորելու հանգամանքով: Շատ դիպուկ կերպով ցույց է տրված, թե ինչպես գագառն իրեն համար բաղնիք է դարձրել գեղեցիկները և ուտում է մեռելների ոսկրոտին.

«Ազնիւ ունի ինքն ժանիք,
Իշխանայք մի իրք հանդիպիք,
Գերեզմանաց ունի բաղնիք,
Ուտէ զմեռեալն ու ոսկրորտիք»¹³:

8. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 695, Բ. 417ա:

9. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2961, Բ. 234ա:

10. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր, № 6045, Բ. 184ա:

11. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 695, Բ. 416ա:

12. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 7703, Բ. 104ա:

13. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 6045, Բ. 177ա:

Հաճախ երկրորդական կարծված իրերը նկարագրելիս, Շնորհալին կանգ է առնում նրանց բնորոշ մանրամասնությունների վրա և հետաքրքիր դարձնում այն, որը և վկայում է հեղինակի ընդունակությունների մասին։ Սրանց մեջ ևս նկատվում է ժողովրդական ստեղծագործություններին յուրահատուկ կնիքը՝ սրամտություններ, իմաստալից կատակներ, թաքնված հումոր և այլն։

Ահա մի բնորոշ օրինակ.

«Գարուն դայ հողն ի ծնունդ
է հանց մանրիկ քան զկուրման հունտ,
Վանք վախենայ 'ւ աբեղագունդ
Առնու ամէն աշխարհս թունդ»¹⁴։

Զիտին (մի փոքրիկ թռչուն) նվիրված հանելուկն ևս նմանօրինակ մի քառյակ է, որտեղ մեծ սրամտություն կա։ Հեղինակը նշում է, թե այդ թռչնիկը չնայած անչափ խաղող ուտելով գիրացել է, բայց հակառակ դրան, նա իր արժեքով «մեկիկ մի փող» չարժի։

«Կայր ի աչգին ինքն գողէ գող,
'ի ահեղ ուտէր ինքն խաղող,

14. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 7703, Թ. 101ա։

Գիրացեր է զէտ զգէր գող,
Բայց ինքն չարժէ մէկիկ մի փող»¹⁵։

Հետաքրքիր է Աղթամարին նվիրված հանելուկը, որտեղ արտահայտվել է հեղինակի վերաբերմունքը պատմական այդ սրբավայրի նկատմամբ.

«Զարմանք ասեմ քեզ սիրելիք,
Տուն մի տեսի սրբոց տեղիք,
Անդ հաւաքեալ կան շատ վայրիք,
Եւ անկենչ(դ)ան բազում մարդիկէ»¹⁶։

Անտիպ հանելուկների մեջ կան բավական թվով արժեքավոր այլ հանելուկներ ևս, որոնք արտահայտում են հեղինակի միտքն ու ստեղծագործական վարպետությունը։

Շնորհալու անտիպ հանելուկներն ևս հաստատում են այն իրողությունը, որ հեղինակը սերտորեն կապված է եղել ժողովրդի հետ, նրանից է ներշնչվել և նրանից օգտվել։

Եվ այդ Շնորհալու հանելուկների և, ընդհանրապես, նրա մատենագրության անմիջական արժանիքներից մեկն է։

15. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 4283, Թ. 21ա։

16. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 7703, Թ. 103բ։

